

ՄԵԾ ԸՆԿՐԿՈՒՄԸ

Արցախի հարցին եւ երկրաշարժին հետեւա՞նքն էր արդեօք որ մեզի՝ հայ ժողովուրդին գրեթէ մոռցնել տուաւ մեր Դատը - 1915ի Եղեռնը եւ անոր հատուցումը:

Եթէ երկու տարի ետ երթանք, պիտի նկատենք որ տակաւին հատուկեմտ ձեռնարկներ կ'ըլլային Հայկական Դատը արժարժ պահելու, թէեւ առանց մասնաւոր նպատակի եւ համահայկական ծրագրումի: Սակայն 1988 Փետրուարէն ի վեր գրեթէ անշարժութիւն կը տիրէ այս կարեւոր մարզէն ներս:

Կարծեմ անմիջապէս պիտի առարկուի թէ արտասահմանը երկու տարի է իր ուշադրութիւնը կեդրոնացուցած է Արցախի եւ Հայաստանի վրայ, եւ թէ մեր նիւթական եւ կազմակերպչական բոլոր միջոցներն ու ուժերը տրամադրած ենք երկրաշարժին աւերները չէզոքացնելու: Ճի՞շդ է այս բացատրութիւնը, որ կը թուի աւելի ինքնաշնորհաբար ըլլալ:

Կ'ենթադրեմ որ երկրաշարժէն տարբեր պատճառներ կան Հայ Դատի հետապնդման մեր ջանքերուն գրեթէ ջլատուած վիճակին համար:

Նախ՝ հաւատացեալներուն թիւը նուազած է տասնամեակներու ընթացքին, վերածուելու համար արտասահմանի հայութեան ընդհանուր թիւին շատ ջնջին մէկ տոկոսին:

Ապա՝ նուազած է Հայ Դատին համար աշխատողներուն թիւը:

Եւ վերջապէս՝ յուսահատութեան մօտեցող զգացումը տարածուած է գրեթէ բոլորին վրայ:

Զարմանալի՞, անակնկալ՞ այս կացութիւնը:

Մօտ վեց ամիսէն պիտի յիշատակենք Մեծ Եղեռնի 75րդ տարին. ուրեմն երեք-հառորդ դար անցած է 1915էն, եւ շատ շուտով 75ը պիտի ըլլայ 100 տարի, դար մը ամբողջ: Տարիներու ընթացքին փոխուած են սերունդները - վերապրողները արդէն հեռացած են այս աշխարհէն, եւ 1915-1920ի որրուկները արդէն գերեզմանին եզերքն են: Անոնց գաւակները, ա'լ սպիտակահեր, իրե'նք դարձած են հայր եւ մեծհայր: Սերունդներուն հետ փոխուած են ըմբռնումները, մտայնութիւնները, հայեցակէտները: Փոխուած են հայերու՝ կեանքին մէջ ունեցած նախապատուութիւնները. այսինքն՝ Հայ Դատի հետապնդումը հայերու կեանքին մէջ ա'լ հիմնական տեղը չի՛ գրաւեր - եթէ նոյնիսկ տեղ մը ունի...:

Մեղադրե՞լ:

Այդպիսի բան ընելէ առաջ պէտք է նկատի ունենալ պայմանները որոնց ենթակայ ենք վտարանդի մեր կեանքին ընթացքին: Տրուած՝ իրարմէ տարբեր, յանախ հակոտնեայ քաղաքակրթութիւններ եւ կենցաղ ունեցող երկիրներու մէջ, գուրկ՝ հայերէն խօսելու, հայկականութեամբ շարունակելու ամենօրեայ կարելիութիւններէն, եւ միւս կողմէ՝ ենթակայ շրջապատի բնորոշ ազդեցութիւններուն, իրարու յաջորդող սերունդները հետզհետէ կը հեռանան հայ ըլլալու գիտակցութենէն: Եւ շրջապատը ի'նք կը փախչի ինքնէն՝ նման հեռացում մը, արմատներէն անջատուելու, արիւնի թելերը կտրելու եւ ա'լ վերջնականապէս կորսուելու կարելիութիւն մը. փոխարէն շողացնելով օտար համայնքէն ընդունուելու, անոր մաս կազմելու դիրքին փոխընտրանքը:

Եւ այս դիրքին չէ՞ որ մեր սերունդները կ'ուտէ-կ'անհետացնէ: Հայ ըլլալ՝ դժուար կեանք ապրիլ կը նշանակէ նորերէն շատ-շատերուն համար: Հայերէ՞ն սորվիլ, երբ նոր հայր կը ծնի անգլերէնի, սպաներէնի, արաբերէնի, ֆրանսերէնի ընդհանուր մթնոլորտի մը մէջ, տեղական լեզուին ընդունելով որպէս իր մայրենի բարբառը: Հայ եկեղեցի՞ երթալ, երբ անոր շարականներէն եւ պատարագէն ոչինչ կը հասկնայ, եւ որուն ծիսակատարութիւնները թերեւս տարօրինակ կը գտնէ, չըսելու համար թատերական: Հայ դպրո՞ց յանախել, երբ այս անունը կրող հաստատութիւններուն մեծ մասը ուսումնական ցած մակարդակ ունի, պատրաստուած ուսուցիչներու պակաս, արդիական պայմաններու բացակայութիւն: Հայու հե՞տ ամուսնանալ, երբ օտարը աւելի փաշտողական է:

Եւ այսպէս կարելի է շարունակել:

Վերը յիշուածները նորութիւններ չեն անշուշտ. ընդհակառակը, անոնք այնքան տարածուած են եւ ընդհանուր՝ որ ա'լ մեզ չեն վրդովել, ահագանգ չեն հնչեցնել: Ա'լ կ'ընդունինք անոնց գոյութիւնը, համակերպած ենք:

Իսկ այս համակերպութիւնն է որ կը փանդէ մեր բարոյական հաւաքական ուժը:

Կը կազմալուծէ մեզ: Ընկրկումի կը մատնէ:

Այո՛, 1930ական թուականներուն հնչած ահագանգները՝ հաւաքական «նահանջ»ի, տակաւին չեն իրականացած. տակաւին հայ ապրող եւ հայ զգացող եւ հայերէ՛ն մտածող գանգուած մը կայ արտասահմանի մէջ: Բայց կայ նաեւ նոյնքան մեծ գանգուած մը՝ որ ի սպառ անհետացած է, կորսուած:

Այսօր, Միջին Արեւելի մեր միջնաբերդին զինուորները կը գործածենք՝ թարմութիւն բերելու Ամերիկաներու, Գանատայի, Աւստրալիոյ, Արեւմտեան Եւրոպայի գաղութներուն: Յետո՞յ: Քսան տարի ե՞տք, քսանմէկերորդ դարու մուտքի՞ն. ուրկէ՞ պիտի բերենք նոր զինուորներ:

Եւ այսպէս ուրեմն, ջլատուած են մեր Դատը հետապնդելու կոչուած ուժերը. երբեմն, միջազգային գիտաժողովներու առջեւ պատահական ելոյթներ՝ պատահական հայերու կողմէ, ոչինչ կը փոխեն, ոչինչ կը շահեցնեն մեզի: Հայկական թերթերու մէջ ա'լ շատ քիչ, բացառաբար յօդուածներ կ'երեւին Ցեղասպանութեան մասին. ա'լ հակահարուած չենք տար երբ թրքական գրապատութիւններ կամ խեղափոխումներ կը հրատարակուին օտար մամուլին մէջ: Գրեթէ ջլատուած ենք: Մեծ ընկրկումի մէջ:

Այդ ջլատումին փաստը չէ՞ Հայկական Ցեղասպանութեան 75ամեակի պատրաստութեան հետ կապուած անորոշութիւնը - որեւէ բան որոշուած է, ո՞վ պիտի կազմակերպէ, ի՞նչ պիտի կազմակերպուի, ո՞ր. հարցումներու շարքը կարելի է երկարել:

Եւ, ամենէն կարելորդ, դարձեալ անջատ-անջատ պիտի յիշենք մեր մարտիրոսները, գանձնք պիտի բաժնենք «իմա»ի եւ «եւկոյ»ի:

Չեմ գիտեր, բայց մէկ բանի վստահ եմ. եթէ դարձեալ պիտի կրկնենք անցեալի սխալները, եթէ դարձեալ պիտի մրցինք իրարու հետ, այն ատեն աւելի՛ պատճառ տուած պիտի ըլլանք նոր սերունդին՝ յուսախաբուելու, ջլատուելու:

Բայց արդէն՝ անոնց օտարացման մէջ մեծագոյն բաժին չունի՞ մեր անմիաբանութիւնը: